

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

1952 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ ԹԻՒ 3-4

1952 Mars-Avril N. 3-4

	PAGE
ԳՐԱԿԱՆ	
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Ղազարոս Աղայանի և իր «Երկու բոյր» վեպը	49
ՏՊՐԹ. Պ. ՄԻՍԱԿԻԱՆ. - Բժշկական տուեալներ Նարեկայ սղերբագրի մէջ	69
Հ. ՂԵՌՈՆԻ ԱԼԻՇԱՆ. - Ս. Ղ. Լեոնց Երէց Վանանդայի (Թրգմ. աշխարհարարի Հ. Քերոբէ վ. Չարանանէ)	78
ՃՈՋՈՒԷ ՖԱԿԵՐՈՅՅԻ. - Համբար - Գաղափարաւորներ - Լորիս (երգեր), թրգ. Իսաւր. Բնաւորէ Հ. Մեսրոպ Ճանաչեան	77
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Համերգ (Երթում)	92
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ	
ՃՐՈՒ. Ս. ՃԵՂԱՆԻՐՅԱՆ. - Պատուհանը հայկական ճարտարապետութեան մէջ	55
ՏՊՐԹ. Յ. ՏԵՐ ԴԱՋԱՐԵԱՆ. - Կիլիկիան վանքեր	87
ՄԱՀԱԳՐԱԿԱՆ	
Հ. Ն. ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ. - † Հանգիստ հոգւոյ Հ. Ալեքսիս վ. Յովսէփեանի	95
ԻՐԱՆՈՍԱԿԱՆ	
Կ. Ք. - Կարմիր գետը. արամ երեք արարով. Հեղ. Բժ. Մանուկ Խանդեկեան. տպ. Ս. Ղազար 1952	91

LITTÉRATURE

P. M. Djanachian. - Ghazaros Aghayan et son roman « Les deux sœurs »	49
Dr. B. Missakian. - Données médicales dans l'œuvre poétique de Nareghatzi	69
P. L. Alishan. - St. Léonce, prêtre de Vanante (trad. par le Rév. P. Chérubin Tchrakian)	78
Giosuè Fagherazzi. - La renommée - L'idéal - Loris (poésies) trad. de l'ital. par P. Mesrop Djanachian	77
P. M. Djanachian. - Symphonie (poésie)	92

BEAUX ARTS

Ing. S. Djévalir. - La fenêtre dans l'architecture arménienne	55
Dr. H. Der Ghazarian - Les Couvents de Cilicie	87

NECROLOGIE

P. N. Der Nersessian. - † La mort du Rév. P. Alexis Hovsepien	95
---	----

RECENSION

P. C. K. - « Le fleuve rouge », drame en 3 actes, œuvre de Mr. Manugh Khanebghian, edit à St. Lazare, 1952	91
--	----

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1952
110-րդ ՏԱՐԻ



ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ
ԹԻՒ 3-4

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ԵՒ ԻՐ «ԵՐԿՈՒ ՔՈՅՐ» ՎԷՊԸ

Երբ հոս Աղայանի անունը վէպի մը կողքին նկատելու յանգգնութիւնը կ'ունենամ, չկարծուի թէ այս գրագէտին բնագանցական նկարագրին դէմ հակասութիւն մըն է որ պիտի փորձեմ: Մանկական հէքեաթներու հեղինակ Աղայանը մօտեցած է վէպին ալ, Արարիւն և Մանուկ, Երկու քոյր, գործեր են, որոնց խորքին տակ կ'ապրի միշտ զիւրացի ու ժողովրդագիր գրագէտը, առանց փայլի, առանց խոշոր անուն մը դառնալու յաւակնութիւններով: Հայ գրականութեան պատմութեան մէկ անկիւն մը, աթոռակ մը գրաւելու արժանի այս դէմքը, արեւելահայ վիպագրութեան ուսումնասիրութեան շրջանին աչքիս դաւա իր վէպերէն մէկուն Երկու քոյր-ին համեստ ներկայութեամբը գրական գործերուս մէջ:

Աղայան արեւելահայ վիպագրութեան այն ճիգը կը ներկայացնէ՝ որ բնականօրէն արդիւնաբերած է հոն, ինչ որ բուն պայքարով ձեռք բերուեցաւ պոլսահայ գրականութեան մէջ՝ գաւառական շուկային ներարկումին անհրաժեշտութիւնը շեշտող շարք մը գրագէտներու լուսաւոր գործունէութեամբ մամուլի մէջ, և գործնական հոգի վրայ՝ օրինակով: Հեռանալ հայրենի հողէն, ջուրէն, բարքերէն, ըսել է լքել ազգային ներշնչումը, և այս լքումը մահ է ազգային գրականութեան: Չեմ միտեր միջազգայինը, ընդհանուրը: Սակայն լաւագոյն է ստրկօրէն նմանութեան ճիգեր թափելու տեղ, եւրոպական և կամ միջազգային արժէքներուն ու մտքերուն շրջապատին մէջ ծուարելու և փոքրիկ անկիւն մը գրաւելու տեղ, մնալ ազգայինի և մեր սրտին հաղորդական լայն շրջապատին մէջ, և տալ ինքնուրոյն գործեր:

Յինքեան գրականութիւնը ազգ ու սահման չի ճանչնար, մտքի սլացքին սահմանները՝ իր սահմաններն ալ են: Անժխտելի է թէ մեր մէջ անգամ եղած են հեղինակներ՝ որ միջազգայինը ու ընդհանուրը նիւթ ունեցած են, երգած են մարդկային սիրտը,

ներշնչուած են մարդու տառապանքէն, ոչ թէ հայ մարդու: Եւ թերեւս յաջողագոյն արտադրութիւններն ալ ատենք եղած են:

Ամէն ազգի մէջ ընդհանուրին քով պէտք է ապրի սակայն ազգայինն ալ: Ինչ որ Պոլիս տառապեցաւ ի գիւտ այդ ժողովրդական բնիկ ներշնչումներուն, գաւառը, թիֆլիսը և անոր աւելի մօտ մեր գիւղերը առատօրէն ու բնականօրէն մատուցեցին ներշնչումի այդ օշարակը այն գրագէտներուն, որոնք կ'ապրէին ժողովուրդին մէջ, և կամ գիւղերու ծնունդ էին արդէն: Ասոնցմէ է Ղազարոս Աղայեանն ալ:

* * *

Աղայեանի Երկու քոյր-ը կու տայ մեզի ամբողջապէս գիւղը իր մարդերով, իր տիպարներով, իր բնութեամբ, իր գաղափարներով, իր բարքերով, իր կեանքով վերջապէս:

Շամշուղա գիւղն է ատիկա:

Ու պատկերը կը բացուի վայրի բնութեան մէջ: Պատանի մը, որ ինքն իսկ հեղինակն է, տանձենիի մը շուրին տակ ընկողմանած և զրեթէ թաղուած իր մարմինով խոտերու խորութեան մէջ, անհանգիստ տղու հոգեբանութեամբ աչքերը սեւեռած տէրտէրին՝ որ դիմացն է, և սաղմոս կը քաղէ, յարմար պահի մը կը սպասէ՝ որպէսզի փախուստ տայ անոր հսկող աչքերէն: Դաշտերու հեւալը կարծես կը զգաս տօթագին արեւի մը ճառագայթներուն տակ, այդ քանի մը տողերուն մէջ որ սկզբնաւորութիւնը կը կազմեն վէպին:

Փախուստի ճիգերով տառապող պատանիի սիրտը, աչքն ու երեւակայութիւնը կը զրաւուի յանկարծ վայելչակազմ երիտասարդի մը կերպարանքով, որ շնորհք մը խնդրելու համար եկած էր գիւղի տէրտէրին մօտ: Պատանին տարուած ամբողջապէս այդ տիպարէն, կը հետեւի անոր քայլերուն, առանց կարենալու անոր ու

շաղրութիւնը հրաւիրելու իր վրայ, հակառակ ջանքերուն: Կանգ կ'առնէ յանկարծ երիտասարդը ու դառնալով իր փոքրիկ ուղեկցին:

— Բալա ջան, գնա՛ տէրտէրիդ ասա՛, գայ ինձ հաղորդի: Գնա՛, բալա՛ ջան, գնա՛. ես հեռու տեղ պիտի գնամ, կարելի է ինչ պատահի ճանապարհին, դրա համար ուզում եմ հաղորդել:

Պատանին կը վազէ իր առաքելութիւնը կատարելու. բայց հազիւ քանի մը քայլ ճամբայ կտրած էր, կը լսէ ատրճանակի թնդիւնը: Երիտասարդը զարկած էր ինքզինքը իր սրտէն:

Վիպագիրը կը գոցէ այս տեսարանը, թողլով ընթերցողը անսովոր հետաքրքրութեան մէջ, որ վէպին վերջին էջին մէջ միայն պիտի գտնէ կապը դէպքերուն:

* * *

Աշուն է արդէն. գիւղին անտառներուն մէջ եռուզեռ կայ: Որսորդներ, բախտախնդիրներ խումբերով կ'աղմկեն խորհրդաւոր լռութիւնը: Այդ խումբերէն մէկուն մէջն է Արզուման երիտասարդը, գեղեցիկ, համակրելի ու խիզախ: Մինչ իր ընկերները կ'ընթերեն խաբոյկի մը ու ժեղ բոցերով ճեղքելով գիշերուան թանձր խաւարը, ինքը կը հեռանայ խումբէն՝ այցելելու համար իր սրտին սիրածին:

Մինչ Արզուման կը վազէ դէպի իր սրտի առարկան, վիպագիրը կու տայ մեզի անցեալը այն նահապետական բազմաճոխ տան, որուն փառքի օրերը անցած են հիմա, և որմէ մնացած են երկու քոյրեր միայն, Մարիամ և Հերիքնազ: Մարիամ ամուսնացած արդէն ու Հերիքնազ՝ տասնութամեայ գեղեցկուհի մը, որ զրաւած է սիրտը Արզուման երիտասարդին:

Լուսնեակ գիշերուան նկարագրութիւնը, գիւղին վրայ տարածուած խաղաղութեան պատկերը, գեղջուկ ոճով մը կատարուած, պարզ, առանց զարդերու, գեղեցիկ էջերէն մէկն է: Ու այդ հանդարտ գիշերուան

ծոցին մէջ է որ Արզուման Հերիքնազին սիրով կ'այրի: Շամիր, Մարիամին աւուսինը, բարեբախտաբար բացակայ է տունէն, հակառակ պարագային՝ ըլլալով կասկածոտ ու նախանձոտ, աւելորդ տեղ գիշերուան լռութիւնը պիտի աղմկէր: Շամիրի վերադարձը և Արզումանի մեկնումը կը զուգադիպին սակայն իրարու. շուրջ մը, խշրտին մը տերեւներու, պատճառ կ'ըլլայ վրդովումի, ու Շամիր այդ գիշերունէ արդէն կը սկսի իր կասկածներուն շղթան յորինել, սուտ, անմիտ կասկածներու, բոլորովին անհիմն ու հակառակ իր կնիջ անմեղութեան:

* * *

Ճաղարանց տունը յափշտակած ու իւրացուցած էր Արզումանի հօրը արտերը, ծայր աստիճան աղքատութեան մէջ թողլով Արզումանեան ընտանիքը: Այս յայտնի անիրաւութիւնը զրգոած էր դրացիներն ալ: Այս գերազգիւ վիճակը պատճառ կ'ըլլայ որ դաշտային աշխատութեանց ժամանակ՝ Արզուման սպաննէ երեք երիտասարդներ ճաղարանց ընտանիքէն ու փախչի լեռները: Դէպքը կը վրդովէ բովանդակ գիւղը, ու Արզումանի անունը բերնէ բերան, մերթ իրը դիւցազ և մերթ իրը մարդասպան՝ կը յուզէ հոգիները գիւղը սիրողներուն կամ ատողներուն:

Հերիքնազ այլայլած է: Ու ահա երկրորդ անգամ մ'ալ Արզուման, գիշերը առած իրեն պահապան, կը վազէ սեւ ձիով մը դէպի իր սիրելին: Այն պահուն, ուր Արզուման կը պատրաստուի ճամբայ ելլելու, Շամիր ի խնդիր Արզումանի, աւագակներու խումբին մէջ կը մտնէ յանկարծակի: Արզուման կը խնդրէ աւագակապետէն որ մինչեւ լոյս առաւօտ թոյլ չտայ Շամիրին հեռանալու այդ վայրէն, իրեւ կասկածելի և անձանօթ մարդու:

Շամիր կ'առաջարկէ խաբոյկ վառել և խորովել վայրի այժ մը. իր նպատակն է խաբոյկին լոյսով մէկիկ մէկիկ ճանչնալ

աւագակները և գտնել անոնց մէջ Արզումանը, միւս օրը գիւղ վերադարձին՝ պարծելու համար թէ տեսած է զայն աւագակներու խումբին մէջ: Բայց Շամիր չի հասնիր իր նպատակին:

Արզուման կը մտնէ անխռով գիւղ և կը տեսակցի իր Հերիքնազին հետ: Սիրուն տեսարան մըն է նկարագրուածը ուշաթափումի, սիրոյ, և նշանտուքի բնական արարողութեամբ, որով երկու սրտերը կը կապուին վերջնականապէս իրարու հետ:

* * *

Հոս կը սկսի երկրորդ մասը վէպին: Դարձեալ դաշտերն են կանանչազարդ ու ծաղկազարդ բնութեան մէջ, ուր բլուրներու կողմն ի վար կը վազվզեն աղջիկներ ու ծաղիկ կը հաւաքեն երգելով, վարդավառի տօնին համար: Հերիքնազ և Մարիամ անոնց մէջն են: Արզուման խումբ մը ձիաւորներով կ'անցնի այն դաշտերէն, ու Մարիամի հետ ժամադրութիւն կը դնէ գիշեր ատեն տեսակցելու, Հերիքնազի մասին խօսելու համար: Արզուման կը յայտնէ իր միտքը. որոշած է առնել Հերիքնազը և անցնիլ սահմանը և հոն պսակուիլ, և ապրիլ խաղաղ: Սակայն կ'իմանայ Մարիամէն՝ որ Հերիքնազ, նոյն օրը արդէն դաշտերէն վերադարձին, ջերմով պառկած է անկողին, և հետեւաբար հարկ է քիչ մը սպասել իրագործելու համար ծրագիրը:

Հերիքնազ չի կրնար մասնակցիլ վարդավառի հանդէսներուն, վիճակահանութիւններուն, բախտի խաղերուն: Կը դրկէ երկու մատանի, մին իրեն, միւսը Արզումանին համար, ու կ'իմանայ ուրախութեամբ իր ընկերուհիէն որ շատ բախտաւոր ու երջանիկ պիտի ըլլան տէրերը այդ մատանիներուն: Հերիքնազի ուրախութեան չափ ու սահման չկայ:

Գիւղին մէջ թաթոսը, ճաղարանց ընտանիքին պետը, և միւս դրացի ու ծանօթ ընտանիքները և անոնց պետերն ու երիտա-



1636-41

սարգէներ համաձայն չեն իրարու հետ, շատեր իրաւունք կու տան Արզումանին և կը գտնեն զինքը բոլորովին անմեղ ու արդար: Անիրաւութիւնը թաթոսին է, ինքն է պատճառը բոլոր եղածին: Ու թաթոս զայրացած է, արիւնը զարկած է զլիսուն: Կը սպասէ յարմար առիթի մը՝ հանդիպելու Արզումանին:

Հերիքնագի վիճակը չի բարւոքիր: Օրերը կ'անցնին, ջերմը կը տանջէ խելացորներով զինքը: Գաղտնի իր քրոջմէն, ընկերուհիի մը հետ կը վազէ աղբիւրի պաղ ջուրին, ատով վանել կարծելով իր տագնապեցուցիչ ջերմը: Այդ յիմար փորձը աւելի կը սաստկացնէ հիւանդութիւնը, գամելով բոլորովին զինքը անկողին:

Շամիր լսած էր թէ Մարիամ գիշերները գաղտնի ժամադրութիւններ կու տայ Արզումանին: Չէր գիտեր սակայն թէ ամէն ինչ Հերիքնագին համար է: Ու գիշեր մը կը պատահի կնոջը անտառին մէջ, մինչ նէ կ'երթար ժամադրութեան վայրը, Հերիքնագի առողջութեան մասին լուրեր հաղորդելու համար Արզումանին:

Մարիամ իր գէմը գտնելով յանկարծ ամուսինը գիշերային այդ պահուն, կ'այլալի, կը կապուի բերանը: Շամիր կը հաստատուի իր կասկածներու մէջ: Վայրագ ու անխորհուրդ՝ կը վերցնէ ձեռքը կնոջը վրայ, որ կը հայցէ.

— Դու ուրիշ բան մի՛ մտածեր Շամիր ջան, Աստուած, երկինք, ծով, ցամաք, ես անմեղ եմ...:

Այս սրտաճմլիկ աղաղակներով կը թնդար անտառը, բայց Շամիր խենթեցած, աչքերը սեւցած արիւնի հոսումէն՝ ոչ կը լսէր, և ոչ ալ կը հասկնար խեղճ կնոջ վիճակը:

Ու կը սպաննէ իր կինը հոն ոչխարի մը պէս, իր կինը որ յդի էր չորս ամիսէ ի վեր և զաւակ մը պիտի պարգեւէր Շամիրին:

Ոճրագործութենէն վերջ մարդասպանը ուշաթափուած, եկած իր ինքնագիտակցութեան, կը զգար բոլոր ծանր հետեւանքները իր անմիտ գործին: Ինչպէս արդարացնել ինքզինքը բովանդակ զիւրին առջեւ: Ծածկելու համար իր չարագործութիւնը, անմեղ նահատակին գոտին մէջ՝ քէն քակելով, կը կախէ զայն ծառի մը ճիւղէն, որպէսզի կարծուի թէ ամօթէն ինքզինքը կախած է:

Հերիքնագ անհամբեր կը սպասէ Մարիամի դարձին: Նէ պէտք ունի իրապէս քրոջը խնամքին ու գուրգուրանքին: Բայց Մարիամ կ'ուշանայ: Շամիր կը հասնի տուն ու հեգնելով Հերիքնագին տագնապը. Ուր է քոյրդ, կը պոռայ կատաղութեամբ: Հերիքնագ ճամբայ կ'ելլէ քոյրը փնտռելու: Հարեւաններն ալ, Շամիրի աղմուկին վրայ՝ թէ Մարիամ կորսուած է, կը ցրուին ասդին անդին փնտռելու զինքը: Խուճերն կ'ընկերանայ Շամիրն ալ կեղծ տագնապներու մէջ: Իր ընկերը՝ Խաչատուր, կը բանայ աչքը դաւաճանին, կը ցնցէ խիղճը, ցոյց տալով իրականութիւնը, կնոջ անմեղութիւնը և իր յանդուգն, կոյր ու անմիտ կասկածները՝ երբ անտառին մէջ առաջին անգամ ըլլալով լսած էր հեռուոր ալնարկ մը գիշերային ժամադրութիւններու մասին, և առանց նոյնիսկ ամբողջական գաղափար մը առնելու, վազած էր տուն՝ վրէժի հոգւով լեցուն: Խաչատուր կը յայտնէ նաեւ թէ ինչպէս Արզուման փափաք ունէր, եթէ ճաղարանց տխուր դէպքերը չպղտորէին զիւրին կեանքը, իրմէ՝ Շամիրէն խնդրելու ձեռքը Հերիքնագին:

Շամիրի գլուխը այդ բոլոր իրականութիւններու դիմաց ցնցուած խորապէս, չի գետեր ինչ ընել, ինչպէս դարմանել իր ահաւոր ոճիրը, իր անգառնալի կորուստը:

Հերիքնագ արշալոյսը բացուելուն, ուշաթափուած, ճամբայ կ'ելլէ վերստին իր ինկած տեղէն, այս անգամ անպատճառ գտնելու իր քոյրը: Յանկարծ աչքին կ'ե-

րեւի ճոճող մարմին մը. կը մօտենայ, կը ճանչնայ իր հարազատը, ու անոր ոտքերուն տակ ինկած կ'անշնչանայ ինքն ալ, առանց հասկնալու թէ ինչ կը պատահի իր խեղճ սրտին, որ հոն տեղւոյն վրայ ցաւին ահաւորութեան տակ կը պայթի:

Հարեւաններ կու գան ու կը գտնեն երկու քոյրերը մեռած այսպէս թշուառ վիճակի մէջ:

Շամիր այլեւս խելացնոր, քարաժայռէ մը կը գլտորէ ինքզինքը, գտնելով հոն իր դժոխքը:

Անսովոր ու սարսափելի դէպքին լուրը շուտով կը տարածուի ամէն տեղ, բայց որոնք սիրտը կրնար այնքան զգածուիլ, որքան Արզումանինը: Երկու քոյրերու գերեզմանին վրայ օրերով ծնրադրած լացաւ, լացաւ. բայց արցունքները չկրցան թեթեւցնել իր սիրտը: Կը զգար որ իր պատճառով զոհուած են այս անմեղ գառնուկները, և այդ զգացումը կը մղէր զինքը չրաժնուելու իր սիրելիներէն, հասնելու շուտով իր Հերիքնագին, հոգւով միանալու համար անոր հետ:

Ու հոս վիպագիրը կը կապէ իր վէպին վերջին էջը առաջին էջին: Այն երիտասարդը որ վէպին սկիզբը սպաննած էր ինքզինքը՝ Արզումանն էր...:

Վէպը կը վերջանայ հոս, ցաւի, տխրութեան, հոգեկան վերիվայրումի զգացումներով:

Աղայեան իր պարզ ու միամիտ ոճին մէջ արհամարհելի զրազէտ մը չէ, մանաւանդ թէ իր դժուար նիւթը հաճելի բնականութեամբ մը յաջողած է պատկերացնել, այնպէս որ նիւթը չի մեռնիր իր զրջին տակ. ընդհակառակն առողջ, կենդանի և յուզիչ եղանակով մը դուրս կու գայ:

Ինչ որ ամէնէն աւելի նկատելի է Ա-

ղայեանի այս վէպին մէջ, իր անկեղծութիւնն է, որով իր հոգեկան տրամադրութիւնը, զիւղացիներուն հոգեկան վիճակը, մտածումները, առանց խուսափելու կը պարզէ: Ասիկա բնականութեան տուրքն է և բարիքը, որ կը ցոլայ հոն. խօսակցութիւնները մերթ թանձր են, ինչպէս թանձր են մարդերը, կոպիտ, հողին փառած, առանց նրբութիւններու, և մերթ ալ այնքան զգայուն և նուրբ, մանաւանդ երբ կնոջական հոգին է որ կը բանայ մեզի Աղայեան, զգացնելով բնութեան անազարտ ձայնը, այն վճիտ գեղեցկութիւնը՝ զոր կրքերը դեռ չեն եկած ապականելու և կնճռոտելու: Անկարելի է չզգալ հոն գեղջուկ կեանքին հոտն ու շունչը: Ասիկա ապացոյց է թէ հեղինակը ունեցած է կարողութիւնը զգացնել տալու զայն: Արդէն մեծ յատկութիւն է ասիկա:

Զգացում, սէր, հոգեկան խանդավառութիւն, այս սիրային վէպին ամէնէն գեղեցիկ կէտերէն մին կը կազմեն: Գիւղերուն կամ քաղաքներուն մէջ մարդկային սիրտը միշտ նոյն է: Մաքուր ու երջանիկ սէրը, որ կեանքն իսկ է, իր բովանդակ թարմութեամբ ու գեղով կը պատկերանայ Հերիքնագ-Արզուման սրտերու միութեան մէջ: Արզուման սիրող ու ազնիւ հոգի մը, հակապատկեր չարաշուք դիմագծին որ Շամիրինն է, վէպի ընթացքին կը փնայ համակրելի տիպար մը, որ իր շնչածօղն ու ապրած միջավայրը կը լեցնէ բարութեամբ, ազնուութեամբ ու սիրով:

Տուներու, ապրուստի, մարդերու ու կիներու, դաշտային կեանքի և զուարճութեան նկարագրութիւններէն կ'արտացոլայ տեղական գոյնը, որ վէպին կու տայ հարազատութիւն: Ամէն բան, ամէն նկարագիր իր ճշմարիտ գծերուն մէջ, բնութիւնն իսկ կը ներկայացնէ, ու բնութիւնը կեանքն է. զրականութեան մէջ ալ փնտռուածը ամէնէն վերջ բնութեան կեանքին մերձեցումի ճիգն է: Բան մը որ անբնական է, արդէն տգեղ է, և արուեստ


տակեալ: Գեղեցիկ է Աղայեանի վէպը ո՛չ թէ գրական յատկութիւններու համար, ո՛չ վայելչութեան համար, լեզուի ու արտայայտութեան նրբութիւններուն համար, ուժեղ երեւակայութեան համար. ո՛չ գեղեցիկ է, որովհետեւ մեզի կու տայ զիւղը, իր մարդերով, իր կիներով, իր ըմբռնումով, իր կեանքով, իր բուն տոհմային յատկանիշներով, թէեւ ըլլայ իր արտայայտութեան եղանակը բոլորովին պարզ, միամիտ, անզարդ ու հարթ: Նմանապէս լեզուի առանձնայատուկ դրոշմը, իր բառամթերքով, իր բացատրութիւններով, իր ասացուածքներով կը շեշտէ տեղական գոյնը:

Գերազանցապէս ռոմանթիք վէպ մըն է Աղայեանի Երկու քոյրը, հակառակ որ իրապաշտ հոսանքին մէջ կ'ապրէր հեղինակը: Գրական դպրոցները յաճախ կապանքներ են, մտքի սեւեռումներ, պարտադրութիւններ՝ որ կը շեղեն հոգեկան ապրումները, օրէնքի ու սահմանի տակ առնելու համար զանոնք: Աղայեան ի յոյ առած է նիւթը իր վէպին, և իրապէս պատահած դէպքի մը արձագանգն է որ կու տայ, աղեխարշ դէպքի մը՝ որ ամբողջ

զիւղը կը ցնցէ, չորս մահ մէկ օրուան մէջ, սիրոյ և սիրային յիմար նախանձայուզութեան մը հետեւանքով: Ինքն արդէն անտարբեր մը եղած է գրական պարտադրութիւններու հանդէպ. ինքը իր հոգին է որ ցոլացուցած է մերթ աւանդազրոյցներով, մանկունակ ոճով և մանուկներու հոգեբանութեան յարմար եղանակով մը, և մերթ իր յուշերուն արձանագրութեամբ՝ ինչպէս են իր քանի մը վէպերը՝ գրական համեստ ժառանգութիւն մը ձգած է:

Թող յարգանքի տրիտուր մը ըլլան այս տողերս, առիթով իր մէկ վէպին վերլուծումին, անոր՝ որ մեծ Մանուկը եղաւ և ապրեցաւ պարզ, իր մտքին ու ոճին պէս, և որուն մահուան քառասնամեակն էր անցեալ տարի: Աղայեան իր կեանքով ու գործով կը նմանի այն անշուք ծաղիկին, որ անկիւնի մը մանուկներ կը սիրէ, սփռելով իր բոյրը և պարզելով իր գեղեցկութիւնը արեւուն՝ լքուած ու ամայի բնութեան մը ծոցը, առանց վախճալու որ սաստիկ ջերմութիւնը կրնայ այրել զինքը, և կամ խիստ քննադատութիւնը ստուեր ձգել իր վրայ:

Հ. ՄԵՄՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ



ՊԱՏՈՒՀԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՊԱՏՄԱ-ՀՆԱԽՕՍԱԿԱՆ արահետէն՝ հայկական ճարտարապետութիւնը դուրս բերելով, զայն կրկին գործնական գետնի վրայ դնելու և նոր իրագործումներ կառնալ ընելու համար, պէտք է որ մի առ մի քննուին և բանաձեւուին անոր կազմական տարրերը: Այսպէս միայն կարելի կ'ըլլայ հայկական շէնքին իւրաքանչիւր մասերուն կատարեալ ծանօթութիւնը և անոր ճշգրիտ կիրարկումը նորակառոյց շէնքերու վրայ:

Այս նկատումէն մեկնելով, արդէն յաջորդաբար խօսած եմ՝ սինագարդ ծածկոցներու¹, ներգաշնակութեան կանոններու², սիններու³, քանդակազարդերու⁴ և տաճարի⁵ մասին: Կը մնան դեռ նկատի առնուելիք բազմաթիւ կերպեր, որպիսիներն են՝ դռները, սանդուղները, տանիքի կազմութիւնը, ժամատուններու շինութիւնները, զանգակատունները և այլն: Այս կարգէն է նաեւ «Պատուհան»ը:

Ճարտարապետութեան մէջ գործածուած և շէնքին վրայ դրուած զանազան ձեւերուն մէջ, կարեւոր տեղ մը կը գրաւէ «Պատուհան»ը: Անոր ունեցած ձեւը, դիրքը, շարուածքը, մեծ դեր մը կը խաղան շէնքին յատկանիշը բնորոշելու և անոր ճարտարապետական բնոյթը ընդգծելուն մէջ:

Անցեալ դարուն՝ Շարլ Պլան⁶ այս պարագան գեղեցիկ կերպով կը բացատրէր սա բաղդատութիւնը ընելով.

«Բոլոր այն վայրերը, ուր մարդիկ կը հաւաքուին իրենց հաճոյքին համար, յատկանշուած են պատուհաններու առատութեամբ, որոնց յառաջ բերած «պարապ»ները աւելի շատ են քան որմերու «լեցուն»ները:

«Երբ շէնքի մը որմերուն վրայ «լեցուն»ները աւելի տեղ մը բռնեն քան «պարապ»ները, անմիջապէս շէնքին արտայայտութիւնը կը փոխուի: Հովանոցը (kiosque) կ'ըլլայ տուն, տունը կ'ըլլայ վանք, վանքը՝ ամրոց. շարունակելով պատուհաններու թիւը նուազեցնել, ամրոցը կը վերածուի բանտի, բանտը՝ դամբարանի: Հոս՝ այլեւս պատուհան չկայ և որմերու միապաղաղ լուծութիւնը կ'արտայայտէ մահը:

«Իրաւ է թէ միջնադարեան եկեղեցիները ժանեակի մը նման մեծ «պարապ»ներով զարդարուած են, սակայն այս պատուհանները և վարդակները (rosaces), կարմիր, կապոյտ, կանաչ գոյներով ներկուած՝ շէնքին ներսը կը պահէին խորհրդաւոր մթնշաղ մը»:

Հելլենական տաճարը, որ Պելասկեան դամբարանէն կը սեռի, չունի ոչ մէկ պատուհան: Այդ դամբարանական մթութեան մէջ էր որ կը պահէին աստուածութեանց խորհուրդը:

Բնական է մեր խօսքը այսօրուան ճար-

(1) Սինագարդ ծածկոցներու դրոշմները եւ կամաւորապէս զարդասիւնները հայկական ճարտարապետութեան մէջ. «Բազմավիշ», 1942, թիւ 1-12, 1943, թիւ 1-6. Վ. Ենեաթիկ:

(2) Հայկական ճարտարապետութեան ներդրումներուն կանոններու պրպտում «Բազմավիշ». 1947, թիւ 5-10, 1948, թիւ 1. 2. 7. 8. 9. 10. Վ. Ենեաթիկ:

(3) Սինքը հայ ճարտարապետութեան մէջ. «Գեղունի» 1947. Վ. Ենեաթիկ:

(4) La sculpture décorative arménienne. «Pro Arte» 1945, N. 41. Genève.

(5) Տաճարը հայկական ճարտարապետութեան մէջ. «Արի» 1949, թիւ 11-12. Պէյրութ:

(6) Charles Blanc. Grammaire des arts du dessin. Paris.